

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՅԱՆ ԱՐՄԱՆ ՄԱՆՈՒԿԻ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2011

Աւտենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ա. Ա. Սելջոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ա. Ա. Խառատյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Ֆ. Ե. Մայիլյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. մայիսի 20-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՌ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 24/4):

Աւտենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. ապրիլի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ. Ղ. Մուրադյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԻՏԱԳԻՐԸ

### ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՆՆԱՍԻՐՈՒՅԱՆ ընդգրկած ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության ուշագրավ, սակայն ոչ լիարժեք և համակողմանի ուսումնասիրված ժամանակահատվածներից է: Օսմանյան կայսրության և նրա վարչական սահմաններում գտնվող Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրության հարցերով զբաղվել են մեծ թվով մասնագետներ: Սակայն Արևմտյան Հայաստանի, արևմտահայության ու Կիլիկյան Հայաստանի լիակատար, համակարգված պատմության շատ հարցեր դեռ հետազոտության կարիք ունեն: Այդ պատմության համաստեքստում կարևոր է Օսմանյան կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում հայերի ունեցած ներդրման լուսաբանումը:

Արևմտյան Հայաստանի պատմության գիտական հետազոտությունն ունի նաև արդիական նշանակություն հատկապես հայ-թուրքական հարաբերությունների ներկա խնդիրների և հետագա ճիշտ ռազմավարական քաղաքականության մշակման տեսանկյունից, առավել ևս որ վերջին տասնամյակներին թուրքական պատմագրությունը և պաշտոնական շրջանակները հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային հարցեր կեղծում են՝ դրանք մեկնաբանելով միակողմանի ու խեղաթյուրված կերպով:

Սույն առեմախոսությունը փորձ է Արևմտյան Հայաստանի պատմության մի ժամանակաշրջանի՝ XVIII դարի երկրորդ կեսի պատմությունը լրացնելու ուղղությամբ:

Առեմախոսության մեջ լուսաբանվել են Արևմտյան Հայաստանի պատմության մի շարք արդիական ու հանգուցային հիմնահարցեր, մասնավորապես երկրամասի սոցիալ-տնտեսական դրությունը XVIII դարի երկրորդ կեսին, քաղաքային կյանքը, ներքին ու արտաքին առևտուրը, արհեստագործությունը, հարկային համակարգը, հողատիրության ձևերը, բնակչության սոցիալ-իրավական վիճակը, վարչակարգն ու վարչական բաժանումները և այլ հարցեր:

Առեմախոսության շրջանակներում կարևորվել է նաև քաղաքների ժողովրդագրական խնդիրների քննությունը: Քանի որ XVIII դարի վերջին քառորդին Օսմանյան կայսրության մեջ դեռևս պաշտոնական մարդահամարներ չէին անցկացվել, և այդ ժամանակաշրջանին վերաբերող ծննդյան և մահվան հրատարակված գրանցանախագրեր չկան, ապա հայ և այլազգի հեղինակների հաղորդած տարաբնույթ տեղեկությունների մեջ առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում հատկապես ժողովրդագրական տվյալները: Քիչ թե շատ արժանահավատ այսօրինակ տեղեկությունների հիման վրա կարելի է մոտավորապես վերականգնել տվյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի առանձին բնակավայրերի ժողովրդագրական պատկերը: Ժողովրդագրական հիմնահարցերի հետազոտումը ներկայումս ձեռք է բերել նաև քաղաքական կարևորություն՝ դառնալով հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության անհետաձգելի խնդիր:

Սույն ուսումնասիրության մեջ անդրադարձ է կատարվել նաև հայ և այլազգի հեղինակների այն տեղեկություններին, որոնք վերաբերում են հայ ժողովրդի սոցիալ-իրավական դրությանը, նրա նկատմամբ վարվող ազգային ու կրոնական քաղաքականությանը: Դրանց վերլուծության շնորհիվ հերքվում է թուրքական պատմագրության այն անհիմն պնդումը, թե իբր XVIII - XIX դարերում հայ ժողովուրդն Օսմանյան կայսրության մեջ գտնվել է արտոնյալ վիճակում և չի ենթարկվել բռնությունների, ազգային ու կրոնական ճնշումների ու հալածանքների:

**ԱՏԵՆԱԲՈՒՄՈՒԹՅԱՆ ՆՄԱՍԿՆ ՈՒ ԽՆԻՒՆԵՐԸ.** Ատենախոսության հիմնական նպատակը սկզբնաղբյուրների ու պատմագիտական գրականության համակողմանի ուսումնասիրությամբ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության՝ XVIII դարի երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական վիճակի ներկայացումն է:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության համատեքստում խնդիր է դրվել ատենախոսության մեջ լուսաբանել և ներկայացնել հետևյալ հիմնահարցերը.

➤ Ուսումնասիրել նշված ժամանակաշրջանի՝ Արևմտյան Հայաստանի պատմությանը վերաբերող աղբյուրների տեղեկություններն ու պատմագիտական գրականությունը:

➤ Քննության ենթարկել այդ աղբյուրներում պատմագիտական արժեք ներկայացնող հաղորդումներն ու տեղեկությունները:

➤ Ներկայացնել ուսումնասիրվող ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության քաղաքական դրությունը, կայսրության վարած ներքին քաղաքականությունը և դրա հետևանքները:

➤ Ներկայացնել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը:

➤ Նոր ու հավաստի տվյալների հիման վրա ուսումնասիրել և ներկայացնել հայոց պատմության հիշյալ ժամանակահատվածի պատմությունը:

**ԱՏԵՆԱԲՈՒՄՈՒԹՅԱՆ ՍԵՂՈՒՄՎԱԿԱՆ ՀԻՍԵՐԸ.** Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում են պատմավերլուծական և պատմահամեմատական մոտեցումները, ինչպես նաև պատմականության սկզբունքը և աղբյուրագիտական վերլուծությունը: Հաղորդվող տեղեկությունների հավաստիությունը ստուգելու համար հիմք են դարձել տվյալ ժամանակահատվածն ընդգրկող հայտնի ու մատչելի սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության տվյալները:

**ԱՏԵՆԱԲՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.** Ներկայացված ատենախոսությունն ընդգրկում է հայոց պատմության ուշագրավ ժամանակահատվածներից մեկը՝ XVIII դարի երկրորդ կեսը, սակայն, քանի որ ներկայացված որոշ փաստեր, իրադարձություններ ու երևույթներ սերտորեն առնչվում են ինչպես նախորդ, այնպես էլ հետագա ժամանակաշրջանների հետ, հետևաբար երբեմն շարադրանքը չի պարփակվել ուսումնասիրության ժամանակային ու տարածքային ընդգրկման մեղ սահմաններով:

**ԱՏԵՆԱԲՈՒՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՈՒՅՑԸ ՈՒ ԿԻՐՈՒԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.** Ատենախոսության մեջ փորձ է արվել ներկայացնել XVIII դարի երկրորդ կեսի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական

պատմությունը և հարակից այլ հարցեր, որոնք շրջանցվել են նախորդ ուսումնասիրողների կողմից:

Աշխատանքում համակողմանիորեն վերլուծության են ենթարկվել XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարակզբի հայ և այլազգի հեղինակների վկայությունները, դիտարկվել է դրանց աղբյուրագիտական արժեքը, բացահայտվել նրանց հաղորդած տվյալների կարևորությունը հայ ժողովրդի պատմության հիշյալ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար: Անտեմախոսության մեջ եկուրպացի հեղինակների առանձին վկայություններ թարգմանվել և դրվել են գիտական շրջանառության մեջ: Այդ տեղեկությունները քննելուց, այլ աղբյուրների հետ համադրելուց հետո ճշգրտումներ և լրացումներ են կատարվել XVIII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի քաղաքների, մասնավորապես, Կ.Պոլսի, Էրզրումի, Կարսի, Բայազետի, Բիթլիսի, Թոքատի, Դիարբեքրի հայ բնակչության թվակազմի վերաբերյալ տվյալների մեջ: Քննարկման նյութ են դարձել նաև նշված ժամանակաշրջանի հեղինակների Արևմտյան Հայաստանի վերաբերյալ հաղորդած սոցիալ-տնտեսական, սոցիալ-իրավական, ազգային ու կրոնական բնույթի տեղեկությունները, ինչպես և հայ ժողովրդի ընդհանուր վիճակն Օսմանյան կայսրության մեջ: Վեր են հանվում, համեմատվում, վերլուծվում ու մեկնաբանվում այս մասին նրանց հաղորդած տեղեկությունները:

Անտեմախոսության մեջ փաստարկված ու հիմնավորված դրույթներն ու եզրահանգումները, ինչպես նաև առանձին մասեր կարող են օգտագործվել Հայոց, Օսմանյան կայսրության և Համաշխարհային պատմության առանձին թեմաների վերաբերյալ դասախոսությունների, ընդհանրացնող աշխատությունների պատրաստման, Արևմտյան Հայաստանի պատմության որոշ հարցերի լուսաբանման համար: Աշխատանքում մեջբերված հեղինակների առանձին հաղորդումներ պարունակում են կարևոր, հավաստի տվյալներ XVIII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության և հայոց պատմության վերաբերյալ: Դրանք արժեքավոր են և կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար:

**ԱՆՏԵՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ:**

Անտեմախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են 7 հոդվածներում և հանրապետական օրտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

**ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՎՈՒԹՅԱՆ ԱՄՏԻՄԱՆ ՍԿՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՍՆՈՒԹՅԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ:**

Սույն ուսումնասիրության համար սկզբնաղբյուրներ են հանդիսացել հիմնականում տպագիր և մատչելի բազմաբնույթ աշխատություններ փաստաթղթերի ժողովածուներ, ձեռագիր հիշատակարաններ, հայ և օտար ժամանակագիրների, աշխարհագիրների ու հատկապես ճանապարհորդների աշխատություններ:

Սոցիալ-տնտեսական ցանկացած թեմայի ուսումնասիրման համար անօգնահատելի են հատկապես փաստաթղթերի ժողովածուները: Դրանք պարունակում են եզակի ու մեծարժեք տեղեկություններ գործող օրենքների, հողային հարաբերությունների մասին: Իրենց պարունակած փաստագրական նյութի հավաստիությամբ աչքի են ընկնում հատկապես Ա. Խ. Սաֆրաստյանի և

Ս. Կ. Ջուլյայանի «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI - XVII դդ. Կանոնադրամներ)» և Ա. Փափազյանի կազմած «Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16 – 19 - ըր դարեր)» ժողովածուները: Բազմաթիվ տեղեկություններ և տվյալներ են օգտագործվել վերոհիշյալ հեղինակների խիստ արժեքավոր ժողովածուներից և Ա. Փափազյանի շահեկան հոդվածներում<sup>1</sup> մեջբերված թուրքական վավերագրերից:

Սույն թեմայի ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն են ներկայացնում օտարագոհ ուղեգիրների, ճանապարհորդների ու դիվանագիտական գործիչների աշխատությունները: Թուրքական, վրացական, ռուսական<sup>2</sup> և եվրոպական այդ աղբյուրների հաղորդած տեղեկությունները հողատիրության, հարկային համակարգի, բնակչության սոցիալական դրության, թվաքանակի, զբաղմունքի, սովորույթների, հավատի ու բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ ոչ միայն նպաստում են խնդրո առարկա բազմաթիվ հարցերի ճշգրտմանն ու լրացմանը, այլև հնարավորություն են տալիս ավելի խոր ու ընդգրկուն ներկայացնելու նշված ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զանազան կողմերը:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում առանձին հարցերի լուսաբանման առումով արժեքավոր է Սիմեոն Երևանցու «Ջամբը» աշխատությունը<sup>3</sup>: Այն հարուստ նյութ է պարունակում Հայոց եկեղեցու, թեմերի և Մայր Աթոռի պատմության, եկեղեցու և վանքերի տնտեսության, եկեղեցուն տրվող հարկատեսակների, դրանց չափ ու քանակի, նվիրակների զործունեության ու լիազորությունների և տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ:

Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ու հարակից այլ հարցերի ուսումնասիրության համար առատ նյութեր են պարունակում Գյուևտ քահանա Աղանյանցի կազմած ժողովածուները<sup>4</sup>:

Նշված ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում նաև նշանավոր արևելագետ Ա. Տվերիսիոնովայի կազմած և խմբագրած ժողովածուն<sup>5</sup>: Այն Օսմանյան կայսրության հողատիրական հարաբերությունների, օրենքների ու եզրույթների մի իսկական շտեմարան է.

<sup>1</sup>Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. Կանոնադրամներ), Ե., 1964, **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, **Փափազյան Ա.**, Ռջ թուրք ազգերի իրավագուրկ վիճակը Օսմանյան կայսրությունում և Թանզիմաթը, - ԵՊՀ, Արևելագիտության հարցեր, Պրակ 1-2, Ե., 1983, էջ 63-80, **Մույնի** Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր, - ՊԲՀ, N4, Ե., 1983, էջ 201-211:

<sup>2</sup>Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա., Ե., 1961, Հատոր Բ., 1964, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, N4, Թուրքական աղբյուրներ. Ե., 1967, Հատոր Գ., **Չորանյան Պ. Ա.**, Կրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Ե., 1981, **Путешествия по Востоку в эпоху Екатерины II, Издание подготовили А.А. Вигасин, С.Г. Карпюк. М., 1995.**

<sup>3</sup>**Սիմեոն Կաթողիկոս Երևանցի**, Ջամբը, Վաղարշապատ, ՌՅԳԳ.-1873, **Մույնի** Ջամբը, Ե., 2003:

<sup>4</sup>Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Գ., Թիֆլիս, 1894, Գիրք Ժ., Թիֆլիս, 1912:

<sup>5</sup>**Аграрный строй Османской империи XV-XVII вв. Документы и материалы. Составление, перевод и комментарии А.С. Тверитиновой. М., 1963.**

արժեքավոր են նաև հեղինակի տված բացատրություններն ու մեկնաբանությունները:

Օսմանյան կայսրության և Պարսկաստանի վերած հարկային քաղաքականության, հարկերի տեսակավորման, հարկային եզրույթների բացատրության ու մեկնաբանման, չափ ու քանակի ճշգրտման, հարկազանձման եղանակների ու ժամանակի և հարակից այլ հարցերի ուսումնասիրության գործում լուրջ ներդրում են Լևոն Վարդանի աշխատությունները<sup>6</sup>: Սոցիալ-տնտեսական կյանքի այդ բնագավառի վերաբերյալ բազմակողմանի ու հարուստ փաստական նյութի ընդգրկմամբ դրանք խիստ արժեքավոր են:

Թեմայի ուսումնասիրության համար հատկապես կարևոր են եվրոպացի հեղինակների ուղեգրությունները: Սակայն դրանք հայագետների կողմից առանձին-առանձին և մանրազնին ուսումնասիրված չեն, և դրանց տեղեկություններն ըստ արժանվույն ներառված չեն գիտական շրջանառության մեջ: Այդ աղբյուրների պատմական ու գիտական արժեքը բարձր է, քանի որ եվրոպացի հեղինակները եղել են իրենց նկարագրած դեպքերի ու իրադարձությունների սկանառեսն ու մասնակիցը: Բնականաբար, այդ աղբյուրները գերծ չեն թերություններից, անճշտություններից և կողմնակալությունից: Հետազոտողներից պահանջվում է մեծ զգուշություն այդ աղբյուրների նկատմամբ: Դրանց տեղեկություններն ամիրաժեշտ է օգտագործել այլ աղբյուրների տվյալների հետ համեմատելուց, ճշգրտելուց հետո:

Եվրոպացի հեղինակների ուղեգրությունները հայ ուսումնասիրողներին մատչելի դարձնելու առումով զնահատելի ներդրում է կատարել Հ. Հակոբյանը<sup>7</sup>:

Այս ասպարեզում հաջորդ գիտական լուրջ ներդրումը կատարեց ակադեմիկոս Մ. Ջուլյայանը՝ 1990 թ. տպագրելով «Հայ ժողովրդի XIII - XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների» աշխատության առաջին գիրքը, որը նվիրված է քաղաքական պատմության առավել հետաքրքիր դրվագներին<sup>8</sup>:

Եվրոպացի հեղինակների առանձին հաղորդումներ պարունակում են կարևոր, հավաստի տվյալներ XVIII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության պատմության և հայոց պատմության վերաբերյալ: Սույն աշխատանքում եվրոպացի հեղինակների XVIII դարի երկրորդ կեսին վերաբերող տեղեկություններ ենք քաղել ու թարգմանաբար օգտագործել<sup>9</sup>, ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու,

<sup>6</sup>Վարդան Լեւոն, Արեւմտահայութիւնը տնտեսական յարաբերութիւններու ճամբուն վրայ, Պէյրուս, 1998, նույնի Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն մէջ ժ.Ի. Պար, ԱԻ, Ե., 2004:

<sup>7</sup>Տես Հակոբյան Հ., Ուղեգրություններ, Հատոր 2., ժժ. դարի առաջին քանամյակ (1800-1820), Ե., 1934:

<sup>8</sup>Տես Ջուլյայան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա., Քաղաքական պատմություն, Ե., 1990:

<sup>9</sup>Ferrières-Sauveboeuf L.-F., Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, Fait en Turquie, en Perse et en Arabie; Depuis 1782 jusqu'en 1789, Maastricht, t. 1-2, 1790, Olivier G.-A., Voyage dans l'Empire Othoman, l'Égypte et la Perse, Paris, t. 1-2, 4, 1801, 1804.

համարելու, համեմատելու և վերլուծելու, դրանք արձևորելու համար օգտագործել ենք ավելի վաղ և ուշ գրված աղբյուրներում և պատմագիտական աշխատություններում եղած արժեքավոր վկայություններ: Մասնավորապես արժեքավոր են Ջ. Մ. Քիննեյի<sup>10</sup>, Ա. Դյուպրեի<sup>11</sup> տեղեկությունները: Եվրոպացի հեղինակների բազմաթիվ վկայություններ ենք օգտագործել Մ. Վարանդյանի «Հայկական շարժման նախապատմություն» աշխատությունից<sup>12</sup>:

Կ.Պոլսի բնակչության և հայերի թվակազմի վերաբերյալ ճշգրտումներ կատարելիս մեծապես օգտակար են եղել բուլղարացի պատմաբան Ե. Միխովի արժեքավոր աշխատություններում<sup>13</sup> զետեղված փաստական տվյալները:

Արևմտյան Հայաստանի մի շարք խոշոր քաղաքների բնակչության և հայերի թվաքանակի վերաբերյալ օտարազգի հեղինակների հաղորդած բազմաթիվ տվյալներ համեմատել ենք հայկական աղբյուրների՝ մասնավորապես Ղ. Ինճիճյանի, Ղ Ալիշանի, Սերոյբե Կարնեցու, Կրսեի (Կարապետ Հովհաննջանյան), Բ. Ֆերուհիսանի տվյալների հետ<sup>14</sup>: XVIII դարի երկրորդ կեսի Երզրումի և Կարսի բնակչության և հայերի թվաքանակի վերաբերյալ հաշվարկներ կատարելիս արժեքավոր տվյալներ են օգտագործվել Ա. Մելքոնյանի և Յ. Մուրադյանի աշխատություններից<sup>15</sup>:

Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի՝ XVIII դարի երկրորդ կեսի պատմության հարցերը քննելիս օգտակար են եղել այդ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի պատմությունը լուսաբանող մասնագիտական գրականությունը և պատմագիտական ուսումնասիրությունները, եվրոպացի հեղինակների հաղորդած տեղեկությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի պատմության առանձին հարցեր լուսաբանելիս կարևոր են եղել խորհրդային պատմաբաններ Ա. Վիտոլի, Ա. Միլլերի, Մ. Մեյերի, Դ. Երենեկի ուսումնասիրություններում գիտական շրջանառության մեջ դրված արժեքավոր տեղեկությունները<sup>16</sup>: Հատկապես արժեքավոր են

<sup>10</sup> **Kimneir J. M.**, Voyage dans l'Asie-Mineure, l'Arménie et le Kourdistan dans les années 1813 et 1814, t. I-II, Paris, 1818.

<sup>11</sup> **Dupré A.**, Voyage en Perse, t. 1-2, Paris, 1819.

<sup>12</sup> Տես **Վարանդյան Մ.**, Հայկական շարժման նախապատմություն, Զ. 1, ԺՂՆ, 1912:

<sup>13</sup> **Миховъ Н.В.**, Населението на Турция и България прѣзь XVIII и XIX в. Библиографски издирвания съ статистични и етнографски данни, т. 2, София, 1924; т. 3, София, 1929; т. 4, София, 1935; т. 5, София, 1968.

<sup>14</sup> **Ինճիճյան Ղ.**, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Մասն Առաջին, Ալիա, Հատոր Ա., Վենետիկ, 1806, **Ալիշանյան Յ. Ղևոնդ վ.**, Նշմարք հայկականք, Գ. արակ, Վենետիկ, 1870, **Ալիշան Յ. Ղևոնդ վ.**, Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, **Սերոյբե Կարնեցի**, Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին 1812 թ., Ե., 1968, **Կրսե**, Կարս քաղաք, Մոսկուա, 1894, **Ֆերուհիսան Բարունակ Պեյի**, Ճանապարհորդություն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեսնը 1847, Տպ. ի վանս 2. Ա. Աստուածածնի յԼրմաշ, 1876:

<sup>15</sup> **Մելքոնյան Ա.**, Երզրում. Երզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 1994, **Մուրադյան Յ.**, Կարսի նահանգի վարչատնտեսագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 2006:

<sup>16</sup> **Витол А.В.**, Османская империя (начало XVIII в.). Москва, 1987; **Миллер А.Ф.**, Мустафа паша Байрактар. Османская империя в начале XIX века. Москва-Ленинград, 1947; **Мейер М.С.**, Османская империя в XVIII веке. Черты структурного кризиса. Москва,



դրանցում ներկայացված Օսմանյան կայսրության նորացման, արդիականացման ջատագովների ու գաղափարների շեշտադրումը, ինչպես նաև հասարակության քաղաքական ու նշակութային կյանքում տեղի ունեցող նոր երևույթների վերհանումն ու վերլուծությունը, օսմանյան կառավարական շրջանակների տերության քաղաքական ու ռազմական հզորության անկման կասեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ծախսողման պատճառների լուսաբանումը: Վերոհիշյալ հեղինակները փաստական հարուստ նյութերի, այլալեզու աղբյուրների և գրականության, ժամանակակիցների վկայությունների հիման վրա ներկայացրել են տվյալ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմությունը և իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին անմիջականորեն աղերսվող մի շարք հարցերի:

Իր պարունակած եզակի և ուշագրավ տեղեկություններով կարևոր է հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, անվանի հայագետ Դուկաս փո. Ինճիճյանի աշխատասիրած «Աշխարհագրության» առաջին հատորը: Թեև աշխատությունը տպագրվել է 1806 թ., սակայն այնտեղ ներկայացված նյութերը հիմնականում վերաբերում են XVIII դարին: Հեղինակը մանրամասն և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նշված ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանման, տնտեսության, բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, տեղաշարժերի, առանձին բնակավայրերի, ինչպես նաև ժամանակի ուշագրավ քաղաքական դեպքերի մասին: Դ. Ինճիճյանին հաջողվել է ստեղծել Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի արժեք ունեցող ընդգրկուն աշխատություն:

Վաստակաշատ պատմաբան Լեոն իր եռահատոր «Հայոց պատմություն» աշխատության<sup>17</sup> մեջ ներկայացրել է Հայաստանի ծանր վիճակը թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում, փաստագրական տվյալներով լուսաբանել է մահմեդական տիրակալների վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության էությունը, անդրադարձել է արևմտահայերի իրավագուրկ, թշվառ դրությանը: Հողային սեփականության հարցի մասին խոսելիս Լեոն իրավացիորեն նշում է, որ թեև մահմեդական իրավունքը սկզբունքորեն մասնավոր հողային սեփականություն չէր ճանաչում և սուլթանն էր բոլոր հողերի տերը, սակայն մահմեդական տիրապետությունը չկարողացավ ամբողջությամբ արմատախիլ անել այն հողային հարաբերությունները, որոնք գոյություն ունեին մահմեդականների կողմից նվաճված երկրներում:

Աշխատության մեջ Լեոն անդրադարձել է նաև Մայր Աթոռի պատմության, եկեղեցական տնտեսության, եկեղեցուն տրվող հարկատեսակների, դրանց չափ ու քանակի և տարաբնույթ այլ հարցերի:

Հայրենական պատմագրության մեջ հիշյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրության գործում ծանրակշիռ է

1991; Еремеев Д.Е., Турция. В книге: Национальные процессы в странах Ближнего и Среднего Востока. Москва, 1970.

<sup>17</sup> Լեոն, Հայոց պատմություն, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երրորդ հատոր, Ե., 1946:

ակադեմիկոս Մ. Ջուլայանի ներդրումը<sup>18</sup>: Մեզ հետաքրքրող բազմաթիվ հարցեր իրենց արտացոլումն են գտել նրա հիմնարար աշխատությունների մեջ: Նշանակիր գիտնականը, օգտագործելով օտար և հայ սկզբնաղբյուրները, ուսումնասիրողների աշխատությունները, հանգամանորեն շարադրել է Արևմտյան Հայաստանի XVI - XVIII դարերի պատմությունը:

Հայ-քրդական հարաբերությունների պատմությունը և հարակից այլ հարցեր ներկայացնելիս շահեկան է եղել Վ. Բայբուրդյանի «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» արժեքավոր ուսումնասիրությունը<sup>19</sup>: Թեև ժամանակագրական առումով այդ աշխատությունը վերաբերում է ավելի ուշ ժամանակաշրջանի պատմությանը, սակայն հեղինակն իր հետազոտության մեջ արժարծել է նաև խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հարցեր:

XVIII դարի երկրորդ կեսի Արևմտյան Հայաստանի պատմության առանձին հարցեր ներկայացնելիս մեծապես օգտակար են եղել պատմաբաններ Մ. Ներսիսյանի, Հ. Անայանի, Հ. Ղազարյանի, Ա. Ներսիսյանի ուսումնասիրություններում<sup>20</sup> ամփոփված տեղեկությունները և մեզ հետաքրքրող մի շարք հարցերի անդրադարձը:

Նշված ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող էթնիկական դիմափոխման, արտագաղթի ու դավանաափոխությունների ահագնացող գործընթացների, հայերի սոցիալ-իրավական դրությանն առնչվող հարցերը քննելիս օգտակար են եղել Ղ. Ինժիճյանի, Հ. Տաշյանի, Ա. Մելքոնյանի աշխատությունները<sup>21</sup>: Դրանցում հանգամանորեն ներկայացվել է հայ բնակչության ասպագայնացման գործընթացների պատմությունը: Ա. Մելքոնյանը միաժամանակ ճիշտ է ներկայացրել նաև այդ գործընթացների անմիջական հետևանքները, տարբեր շրջաններում հայ բնակչության ազգային նկարագրի աստիճանական դիմափոխումը և հայկական տարրի օտարումն ազգային արմատներից:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը և Արևմտյան Հայաստանում Օսմանյան կառավարության վարած հարկային քաղաքականության լուսաբանման, ինչպես նաև քրիստոնյա հպատակների, մասնավորապես հայերի, նկատմամբ վարվող խտրականության, բռնաճնշումների քաղաքականության, տիրող անհանդուրժողականության և անհավասարության հարցերը քննարկելիս արժեքավոր են եղել հետագա

<sup>18</sup> **Ջուլայան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Ե., 1980:

<sup>19</sup> **Բայբուրդյան Վ. Ա.**, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Ե., 1989:

<sup>20</sup> **Անայան Հ. Ա.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961, **Ներսիսյան Մ. Գ.**, Հայ ժողովրդի նոր պատմության էքզիզից, Ե., 1982, **Ույնի Պատմության կեղծարարները (Հողվածներ և հաղորդումներ)**, Ե., 1998, **Ույնի Հայ ժողովրդի ազատագրական պայքարի թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ.**, Ե., 2002, **Ղազարյան Հ.**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967, **Ներսիսյան Ա. Ն.**, Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրհենտացիան XIX դարի առաջին կեսին, Ե., 1962:

<sup>21</sup> **Տաշյան Հ. Յակոբյուս վարդապետ**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, **Մելքոնյան Ա.**, Հայ բնակչության էթնոկրոնական դիմափոխման գործընթացներն Արևմտյան Հայաստանում XVI - XVIII դարերում, - ՀՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, N 5, Ե., 2005:

ժամանակների պարբերական մամուլում և գիտական հանդեսներում տպագրված մի շարք հոդվածներ:

**ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՒՌՑԱԾՔԸ ՈՒ ԲՈՒՆԱԿՆԵՐՈՒՄԸ**

Ներկայացվող ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

*ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՄԻՄ* հիմնավորվել են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունն ու գիտական նորույթը և ներկայացվել օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

*Առաջին գլուխը՝ «ՔՐՈՒՔԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII դարի երկրորդ կեսին»*, բաղկացած է երկու ենթագլխից:

*Առաջին ենթագլխում՝ «Արևմտյան Հայաստանի քաղաքական դրությունը»*, ներկայացվում է Օսմանյան կայսրության ընդհանուր քաղաքական դրությունը և այդ համապարկերում նկարագրվում է Արևմտյան Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը:

XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունն անկում էր ապրում: Ակնհայտորեն դրսևորվում էին կենտրոնախույս ուժերը, որոնք Օսմանյան կայսրությունը դեպի լճացում և անկում էին տանում:

Հայաստանի ազատագրության ռուսական կողմնորոշումը լայն չափեր էր ընդունել: XVIII դարում ազատագրական շարժման գործիչների մեծ մասն անվերապահորեն պաշտպանում էր ռուսական կողմնորոշումը<sup>22</sup>:

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին պետության մեջ տեղի էին ունենում նահանգային փաշաների անջատողական, կենտրոնախույս ձեռնարկումներ, անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ավազակությունը հասել էին աննախընթաց չափերի: Որոշ խոշոր ավատատերեր իրենց ձեռքում կենտրոնացրին տվյալ տարածքի ամբողջ իշխանությունը: Նրանք այնքան ինքնազուխ էին դարձել, որ նույնիսկ սեփական բանակ ստեղծեցին<sup>23</sup>: XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվարք էր ապրում ներախտական հակասություններից, և ռազմաավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության վարած սոցիալ-տնտեսական ու հարկային քաղաքականությունն իր ողջ ծանրությամբ և դրանից բխող հետևանքներով ընկած էր հատկապես աշխատավոր քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի ուսերին:

*Երկրորդ ենթագլխում՝ «Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը և վարչակարգը»*, անդրադարձ է կատարվում Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի վարչական բաժանմանը, վարչակարգին: Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը

<sup>22</sup>Տե՛ս *Ներսիսյան Ա. Գ.*, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, էջ 288, նույնի *Армянские волонтеры в русско-турецкой войне 1787-1791 годов*, - МПЭ, N 3, 1979, էջ 106:

<sup>23</sup>ՏՄ.: *Новичев А.Д.*, История Турции. Том I. Эпоха феодализма (XI-XVIII века). Ленинград, 1963, с. 241; *Миллер А.Ф.*, Мустафа паша Байрактар. Османская империя в начале XIX века. Москва-Ленинград, 1947, с. 59.

ներկայացվում է ըստ Մ. դ'Օստնի, Յ. Համմերի և Ղ. Ինժիճյանի աշխատություններում տրված ցուցակների, նշվում են այդ ցուցակներում եղած տարբերությունները, որոնք, ըստ երևույթին, գոյություն ունեն այն պատճառով, որ Օսմանյան կառավարությունը, ելնելով հարկահանության գործի հեշտացման, ինչպես նաև ժողովրդագրական տեղաշարժերի, առանձին էյալեթների կառավարիչներին սիրաշահելու և իր ազդեցության տակ պահելու քաղաքականությունից, հաճախակի է փոփոխել վարչական բաժանումը, և այդ փոփոխությունները ոչ միշտ են ժամանակին հաստատագրվել ու վավերացվել արքունական դիվանի համապատասխան փաստաթղթերում:

Միժամանակ պետք է նշել, որ, օգտվելով կենտրոնական իշխանության քուլացումից տեղական որոշ կառավարիչներ ստեղծել էին կիսանկախ իշխանություններ:

Իրենց պատմական հայրենիքի որոշ նպաստավոր շրջաններում հայերը պահպանել էին մի քանի իշխանապետություններ: XVIII դարի երկրորդ կեսին այդ իշխանապետություններից Սաունը, Իսյանն ու Սակիլը, Մուկը, Շատախը և Խտորջուրը կիսանկախ էին: Վերջինս տարեկան որոշ գումար (200-300 դուրուշ) էր տալիս լազ դերեբեյին: Հայկական իշխանապետություններից Մուկի և Շատախի իսկական տերերն էին հայ մեյլիքները, որոնց ձեռքում էր կենտրոնացած ռազմական և վարչական իշխանությունը, դատավարությունը:

*Երկրորդ գլուխը՝ «ԱԳՐԱՆՍԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՏՅԱՆ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ XVIII ԴՈՒԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ»,* բաղկացած է երկու ենթագլխից:

*Առաջին ենթագլխում՝ «Հողատիրական հարաբերություններն ու հարկային քաղաքականությունը»,* վերլուծության են ենթարկված Օսմանյան կայսրության մեջ, ի մասնավորի նաև Արևմտյան Հայաստանում տիրող հողային հարաբերությունները, հողերի տեսակներն ու տարատեսակները, դրանց տիրապետման պայմանները, ինչպես նաև Օսմանյան պետության վարած հարկային քաղաքականությունը, հարկատեսակները, դրանց չափն ու քանակը, հարկահավաքության եղանակները, վճարման ձևերը:

XVI դարում զավթելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքերն այնտեղ հաստատեցին հողօգտագործման ավատական իրենց համակարգը: Նվաճված բոլոր հողերը հայտարարվեցին սուլթանի սեփականություն, սակայն հարկատվության և զինվորական ծառայության պայմանով օգտագործման տրվեց հպատակների: Գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերը բաժանվեցին երեք հիմնական խմբի.

1. Պետական հողեր,
2. Մասնավոր սեփականատիրական հողեր,
3. Վակուֆային հողեր:

Մասնագետներից ոմանք (Մ. դ'Օստն, Յ. Համմեր, Մ. Բելեն, Տիշենդորֆ, Ի. Ուզունչարշլը), ի տարբերություն Ա. Տվերիսիճովայի, Ա. Միլլերի, Բ. Ցվետկովայի, հողատիրության բաժանումը կատարում են ոչ թե ըստ տիրապետության սկզբունքի, այլ հարկային հատկանիշի՝ ուշրիե, խարաջիե, արգ-ի մեմլեթեթ, ընդ որում ուշրիեն նվաճումից առաջ կամ հետո մահմեդականներին պատկանող հողերն են, խարաջիեն՝ ոչ մահմեդական

բնակչության տրամադրության տակ գտնվող հողերը, իսկ արգ-ի մենլեքեթը պետական սեփականությունը կազմող հողերն են<sup>24</sup>:

Պետական հողերի (արգ-ի մենլեքեթ կամ արգ-ի միդիե) մի մասը գտնվում էր սուլթանի, նրա ընտանիքի և պետական պաշտոնյաների անմիջական տնօրինության տակ, իսկ մնացած ավելի մասը մեծ բաժանված էր խոշոր ու մանր ավատատերերին՝ պետությանը մատուցած ծառայությունների դիմաց: Այս միդիե հողերը հատուկ հաշվառման էին ենթարկվում և գրանցման մատյան-դավթարներում արձանագրվում էին դրանց տարեկան եկամտի չափերը և ըստ այդմ էլ տարբերակում էին. ամենաշատ՝ 100000 ակչե և ավելի տարեկան եկամուտ ապահովող հողային տիրույթը կոչվում էր խասս: Հաջորդը գեանեթն էր, որի տարեկան եկամուտը կազմում էր 20000-ից մինչև 100000 ակչե, և դրա տերը՝ գահնը պարտավոր էր յուրաքանչյուր 5000 ակչեի դիմաց մեկ ձիավոր տալ: Հաջորդը թինարն էր, որի տարեկան եկամուտը կազմում էր մինչև 20000 ակչե, և թինարատերը պարտավոր էր յուրաքանչյուր 3000 ակչեի դիմաց մեկ ձիավոր տալ<sup>25</sup>: Ըստ Գ.-Ա. Օլիվիեի՝ եվրոպական թուրքիայում գահնների թիվը 914 էր, իսկ թինարներիը՝ 8356: Դրանց թիվը գրեթե այդքան էր նաև ասիական թուրքիայում<sup>26</sup>:

Մասնավոր սեփականատիրական հողերը (մուլք կամ հայրենիք) հատկացվում էին պաշտոնյաներին՝ պետությանը մատուցած հատուկ ծառայությունների դիմաց: Այս հողերը շատ աննշան տեղ էին գրավում Օսմանյան կայսրությունում, քանի որ գոյություն ունեցող օրենքները թուրքովին չէին խրախուսում մասնավոր անձանց կողմից հողեր ձեռք բերելը և բազմաթիվ սահմանափակումներով գրկում էին նրանց սեփականատիրական իրավունքից<sup>27</sup>: Հողատիրության այս ձևը տարածում գտավ XVI դարի վերջերից, երբ աշխուժացան առևտրավաշխառուական հարաբերությունները: Արևմտյան Հայաստանում մուլքի կամ հայրենիքի իրավունքով հողատարածքներ ունեին ոչ միայն թուրք և քուրդ ավատատերերը, այլև հարուստ հայ գյուղացիներն ու մեծատուն առևտրականները: Հայկական գյուղական համայնքի վերնախավն ու առևտրախոջայական դասը տիրապետում էր զգալի քանակությամբ հողերի:

Պետական հողերը բաշխվում էին ըստ զբաղեցրած դիրքի և պաշտոնի ու ըստ արժանիքների:

Պետական հողերն ունեին նաև բազմաթիվ տարատեսակներ, որոնցից էին. մալիքյանե (մալիքյանե-ի դիվանի), արփալըք, յուրդլուք, օջաքըք, բաշմաքըք, հյուքյունեթ և այլն:

Արևմտյան Հայաստանի կիսանկախ շրջանների հողերը հայերի և փոքրաքանակ քրդերի մասնավոր սեփականությունն էին: Հայ գյուղացիությունը, մշակելով նվաճող ավատատերերին պատկանող կամ ժամանակավորապես նրանց տնօրինության տակ գտնվող հողերը, ընդգրկված էր գյուղական համայնքների մեջ, որն իրավազոր էր լուծելու

<sup>24</sup> Տե՛ս **Զուլայան Ա. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 192:

<sup>25</sup> Տե՛ս **Անայան Բ. Ա.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 12:

<sup>26</sup> Տե՛ս **Olivier G.-A.**, Voyage, t. 1, p. 296-297.

<sup>27</sup> Տե՛ս **Ներսիսյան Ա. Ն.**, Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրինեսացիան XIX դարի առաջին կեսին, Երևան, 1962, էջ 17:

հողօգտագործման հետ առնչվող որոշ հարցեր: Բեն հայ գյուղական համայնքի կախվածությունը տեղական ավատատերերից ակնհայտ էր, այնուամենայնիվ գյուղական համայնքը հայկական շրջաններում արհեսպետում էր իր կենտունակությունը<sup>28</sup>: Գավառահայության ամենատվար հասվածն իրավականորեն ազատ գյուղացիությունն էր: Նրա մի վիջը մասն ուներ սեփական հողաբաժիններ, մյուս մասը մշակում էր պետական կամ մասնավոր հողեր, իսկ մի հասվածն էլ ապրում էր վակուֆային հողերի հաշվին:

Արևմտյան Հայաստանում մեծ թվով հողատարածքներ և նույնիսկ ամբողջական գավառներ դրախտ հյուքյունեթ, օջաքլըք կամ յուփղուք պատկանում էին բուրդ ավատատերերին:

Հողատիրության հաջորդ ձևը վակուֆներն էին, այսինքն այն հսկայական հողատարածքները, որոնք գտնվում էին մահմեդական և քրիստոնյա հոգևորականության ենթակայության տակ: Վակուֆների շարժական ու անշարժ գույքերից ստացված եկամուտներով վերանորոգվում էին մզկիթներն ու եկեղեցիները, զոյատուում հոգևոր դասը, ծախսվում դպրոցների, աղքատների ու կարիքավորների վրա: Վակուֆները չէին դառնում օգտագործողների մասնավոր սեփականությունը, դրանք հոգևոր հաստատության սեփականությունն էին՝ առհավետ օգտագործելու, բայց ոչ օտարելու իրավունքով:

Արևմտյան Հայաստանի թուրքահպատակ շրջաններում գյուղացիները հարկ էին վճարում պետությանը և թուրք հողատերերին:

Օսմանյան օրենսդրության համաձայն՝ բուրդ հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբի՝

1) մահմեդական օրենսդրության՝ շարիաթի վրա հիմնված հարկեր (մերսումաթ-ի շերիե, հուգուգ-ի շերիե, րյուսյում-ի շերիե կամ թեքլալիֆ-ի շերիե),

2) սովորության հարկեր (մերսումաթ-ի օրֆիե, թեքլալիֆ-ի դիվանիե, րյուսյում-ի օրֆիե կամ թեքլալիֆ-ի օրֆիե):

Ուսումնասիրողների մի մասը (Մ. Ակդադ, Վ. Մութաֆչիևա) կողմնակից է այս բաժանմանը: Մ. Կ. Ջուլայանը<sup>29</sup>, համակարծիք լինելով Մ. Ակդադի և Վ. Մութաֆչիևայի հետ, գտնում է, որ հարկերը բաժանվում են երկու որոշակի խմբերի՝ ա) «րյուսյում-ի ռայաթ» կամ հարկեր, որոնք գանձվում էին տեղական ավատատիրոջ կողմից և բ) «թեքլալիֆ-ի դիվանիե» կամ հարկեր, որոնք գանձվում էին պետության կողմից: Մենք, համաձիտ լինելով Մ. Մեյերի, Ա. Վիտոլի հետ, գտնում ենք, որ հարկերը պետք է բաժանել երեք խմբի՝ վերոհիշյալ երկու խմբերին ավելացնելով նաև հարկերի երրորդ խումբը՝ այսպես կոչված «արտակարգ» հարկերը:

1) «թեքլալիֆ-ի շերիե» կամ շարիաթական հարկեր. այս խմբի հարկերի մեջ հիմնական տեղ են գրավում ոչ մահմեդականներից գանձվող շնչահարկը (ջիզիե) և հողահարկը՝ ուշր (աշար, տասանորդ), խաբաջը, զեքիաթը՝ մի քանի տասնյակ տարատեսակներով<sup>30</sup>:

<sup>28</sup>Տե՛ս **Ջուլայան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 204:

<sup>29</sup>Տե՛ս **Ջուլայան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 286:

<sup>30</sup>Տե՛ս **Վարդան Լեւոն**, Հարկերը Օսմանեան Ե. Պարսկական կայսրութիւններուն մէջ ժե. -ի. դար, Ա-Ի, Երևան, 2004, էջ 22:

2) երկրորդ խումբը կազմում են այն հարկերը («թեքլալիֆ-ի օրֆիե»), որոնք հիմնված էին սովորույթի կամ սովորութային իրավունքի վրա: Այս անունով խնամարկված էին գյուղացիական այն հարկերն ու տուրքերը, որոնք գոյություն ունեին տվյալ շրջանում նախածանայան ժամանակներից և որոնք պահպանվեցին սուլթանական իշխանության կողմից: Այս խմբին էին պատկանում հողահարկի բոլոր տարատեսակները (րեսմ-ի չիֆթ, րեսմ-ի նիմ չիֆթ, բեննաք, ջաբա<sup>31</sup>), ինչպես նաև բոլոր սուլթաններն ու վարչական տուրքերը: Որպես կանոն, թեքլալիֆ-ի օրֆիեն վճարվում էր տեղական ավատատերերին և դրանց չափը կարգավորվում էր սուլթանական հրամանագրերով:

3) հարկերի երրորդ խումբն օսմանյան փաստաթղթերում ստացել էր «արտակարգ» անվանումը («ավարիզ-ի դիվանիե»)՝<sup>32</sup>: Սկզբում այս հարկերը անկանոն էին և հավաքվում էին մի քանի տարին մեկ անգամ՝ կախված պետական զանձարանի կարիքներից: Ժամանակի ընթացքում դրանց մեծ մասը վերածվեց սովորական հարկերի, իսկ դրանց տեղը գրավեցին նոր անուններով, բայց նույն նախատակին ծառայող հարկերը: Ի տարբերություն ուրիշ հարկերի՝ սրանք հավաքվում էին ոչ թե առանձին գյուղացիական ընտանիքներից, այլ ընտանիքների խմբից, որոնք կազմում էին հարկային մեկ միավոր ավարիզ-խանե:

Վերջապես կային բազմաթիվ տեղական հարկեր, որոնք արտակարգ հարկերի տարատեսակներ էին: Դրանք հավաքվում էին զավառական իշխանությունների և կենտրոնական կառավարության գործակալների կողմից՝ իրենց օգտին: Քանի որ դա մեծ վնաս էր հասցնում պետական զանձարանին, Բարձր Դուռը դրանք հայտարարեց «անօրինական» («թեքլալիֆ-ի շակկա») և սկզբում շատ հետևողականորեն հանդես եկավ դրանց վերացման օգտին՝<sup>33</sup>:

XVIII դարի սկզբին կառավարությունն օրինականացրեց թեքլալիֆ-ի շակկան. դրանք կոչվեցին «ինդադ-ի խազարիե» և դիտվեցին որպես տեղական կառավարիչներին օգնություն խաղաղ ժամանակ: Չնայած դրան՝ թեքլալիֆ-ի շակկան չվերացավ: Ավելին, զավառական իշխանությունների օրինակով տեղական կառավարման մարմինները և դատարանները (այան, կադի, վոյեվոդ) նույնպես մտցրին իրենց օգտին հատուկ հարկեր, որոնք կոչվում էին «այանիե, այանլըք ջաիգեսի, խարջ-ի իմզա, դեֆթեր ակչեսի» և այլն: Այս հարկերը թեև պաշտոնապես չէին հաստատվել, բայց գոյատևեցին մինչև Թանզիմաթը<sup>34</sup>:

Պետական հարկերի մեջ էին մտնում նաև ռազմական պարիակների (անգարիա) իրագործումը կամ դրանց փոխհատուցումը դրամով:

Ավատատերերին վճարվող հարկերը ավելի բազմաթիվ էին և վճարվում էին բնամթերքի, պարիակների և դրամի տեսքով: Գնալով ավելի գերիշխող էին դառնում դրամական վճարումները:

<sup>31</sup>Տե՛ս Վարդան Լեւոն, Գարկերը, էջ 24:  
<sup>32</sup>Մ. Չուլայանը այս խմբի հարկերը համարում է պետական հարկերի տարատեսակ: Տե՛ս Չուլայան Մ. Կ., Արևմտյան Բայաստանը XVI-XVIII դդ., էջ 290:  
<sup>33</sup>ՏՄ.: Мейер М.С., Османская империя в XVIII веке. Черты структурного кризиса. Москва, 1991, с. 94-95.  
<sup>34</sup>ՏՄ.: Витол А.В., Османская империя (начало XVIII в.). Москва, 1987, с. 17-18.

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում գանձվում էին հարկեր, որոնք ոչ բոլոր դեպքերում և ոչ ամենուր էին միատեսակ գանցվում:

Հարկահանությունն ավելի վատթար էր կենտրոնական իշխանության նկատմամբ սպասմանը քողահաստակ շրջաններում, որտեղ պետական մի շարք հարկեր չէին գանձվում, փոխարենը հարկեր էին տալիս քուրդ, փաշաներին, էմիրներին, հաքիմներին, ցեղապետներին, քուրդ ու թուրք բեկերին:

Օսմանյան կենտրոնական ու տեղական իշխանությունները, քուրդ, ցեղային ավագանին թալանում ու կողոպտում էին հողագործ բնակչությանը, ենթարկում ծանր հարկառվության:

*Երկրորդ ենթագլխում՝* «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը», հանգամանորեն ներկայացվել է Արևմտյան Հայաստանի հիմնական քրիստոնյա բնակչության հայերի նկատմամբ Օսմանյան պետության վարած բացարձակ բռնությունների, անօրինակ կեղեքումների քաղաքականությունը, սոցիալ-տնտեսական բռնաճնշումները, ազգային ու կրոնական հալածանքներն ու հարստահարությունները, դրանց բացասական հետևանքները:

Հայկական և օտար աղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրմամբ և վերլուծությամբ փաստվում է, որ նշված ժամանակահատվածում Օսմանյան կայսրության մեջ հպատակ ոչ մահմեդական ժողովուրդները զրկված էին մարդկային անենատարրական իրավունքներից, և ուռնահարվում էին նրանց ազգային ու կրոնական զգացումներն ու մարդկային արժանապատվությունը:

*Երրորդ գլուխը՝* «ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՐՅԵՄՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

*Առաջին ենթագլխում՝* «Քաղաքները», տարաբնույթ աղբյուրների ու մասնագիտական գրականության օգտագործմամբ ներկայացվել է Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքների և մայրաքաղաք Կ.Պոլսի ընդհանուր պատկերը, արհեստագործական և առևտրական կյանքը, քաղաքների հետամնացության պատճառները, զարգացման միտումները, էթնիկ նկարագիրը, մոտավոր ճշգրտությամբ հաշվարկվել է այդ քաղաքների բնակչության ընդհանուր թվաքանակը և հայերի թիվը:

XVIII դարի երկրորդ կեսին արևմտահայության՝ տոկոսային հարաբերությամբ փոքրամասնությունն ապրում էր քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում: Առևտրաարհեստագործական կենտրոններում բնակվող արևմտահայության հիմնական զբաղմունքը առևտուրն ու արհեստագործությունն էր: Քաղաքներն իրենցից ներկայացնում էին ոչ միայն կենտրոնական իշխանության հենարաններ և հավելյալ արտադրանքի իրացման շուկաներ, այլև նախադրյալներ էին ստեղծում հասարակական արտադրության զարգացման համար: Քաղաքները բաղկացած էին ինքնուրույն միավորներից՝ թաղամասերից (մահալլե), որոնք ապրում էին մեկուսի կյանքով և իրարից տարբերվում էին մասնագիտական, մասամբ նաև էթնոդասական նախանշաններով:

Քաղաքաբնակների կենսապայմանները որոշող մի շարք գործոններ նկատի առնելով՝ կարելի է ենթադրել, որ քաղաքաբնակների (շեհիրյու, շեհիրլի) նյութական գոյավիճակն ավելի բարձր, իսկ շահագործումն ավելի քիչ



եր, քան գյուղացիությանը: Այս հանգամանքն էլ կանխորոշում էր գյուղաբնակների մշտական ներհուսքը քաղաք, մասնական, որ նման տեղաշարժերն արգելող օրենսդրական սահմանափակումներ չկային: Պատահական չէր, որ քաղաքներում արագորեն աճում էր հատկապես արհեստավորների թիվը, որոնք բավարարում էին տիրապետող դասի պահանջումները: Քաղաքներում արհեստագործության զարգացման բարենպաստ պայմանները նպաստում էին առանձին թաղամասերի և քաղաքների մասնագիտացմանը որոշակի արտադրատեսակների պատրաստման գործում:

Քաղաքների բնակչության թվի արագ աճին նպաստում էր նաև տվյալ քաղաքի առևտրական ուղիներին մոտ լինելը: Միաժամանակ քաղաքներում արագորեն ընթանում էր ունեցվածքային շերտավորման գործընթացը: Արհեստագործության զարգացման մեջ մեծ էր ենթաֆունդիների խաղացած դերը: Էնթաֆունդները կանոնակարգում էին արտադրությունը, հաստատում էին աշխատանքի որոշակի մեթոդներ, խիստ սահմանափակում էին արտադրատեսակի քանակը և որակի համար ներկայացնում էին մի շարք պարտադիր պայմաններ: Նույնպիսի խստությամբ կարգավորվում էր նաև ապրանքի իրացումը:

Քաղաքային ազգաբնակչության թիվը XVIII դարի վերջին քառորդին աճման բավականին ցածր ցուցանիշ ուներ: Արևմտյան Հայաստանի քաղաքների մեծ մասում, անբարենպաստ զանազան պայմանների հետևանքով, հայերը կազմում էին բնակչության փոքրամասնությունը:

XVIII դարի երկրորդ կեսին արևմտահայ քաղաքային բնակչության հոծ զանգված էր կենտրոնացած Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում, որն իրենից ներկայացնում էր մի յուրօրինակ ներկայանակ, որում արևմտահայ գավառներից եկած յուրաքանչյուր զանգված, իր հետ բերելով սեփական երանգը, ամբողջացնում էր այդ ներկայանակը: Նշված ժամանակաշրջանում Կ.Պոլիսը արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր կենտրոնն էր: Պոլսահայ զաղուրթի կենսունակությունն ու աշխուժությունը մեծապես պայմանավորված էր արևմտահայ գավառներից դեպի Կ.Պոլիս տեղի ունեցող անընդհատ ներհուսքով, ինչի շնորհիվ էլ այն պահպանում էր արևմտահայության քաղաքական, հոգևոր ու կրթամշակութային կենտրոնի իր դերը:

*Երկրորդ ենթադիտում՝ «Արհեստագործությունը և առևտուրը»,* լուսաբանվում է Արևմտյան Հայաստանի արհեստագործական և առևտրական կյանքը:

Արևմտյան Հայաստանի քաղաքների մի մասը, նշված ժամանակաշրջանում տիրող անբարենպաստ պայմանների պատճառով, անկում էր ապրում և կորցնում իր երբեմնի դերն ու նշանակությունը, անշքանում: Այդ քաղաքներում արհեստագործությունը հիմնականում ծառայում էր գյուղատնտեսությանը և տեղական կարիքների բավարարմանը: Իրենց երբեմնի նշանակությունը շարունակում էին պահպանել Էրզրումը, Թոքատը, Պիարեքիը, Սեբաստիան, Երզնկան, Ամասիան, մասամբ նաև Վանը, Բիթլիսը:

Արհեստագործության և առևտրի առաջադիմության հետ սերտորեն կապված էր նաև հանքավայրերի շահագործումը: Երկրի ընդերքը հարուստ էր

օգտակար բազմապիսի հանձնոներով, վաղնջական ժամանակներից հայտնի էին Կողբի, Կաղզվանի, Կանախի աղահանքերը, Գյունուշխանեի արծաթահանքերը, Արղանա-Մաղենի պղնձահանքերը: Հայտնի էին նաև Խաղբերդի, Կասան-Մաղենի, Դերսիմի, Բիթլիսի և այլ վայրերի բազմանետաղների հանքավայրերը: Հիմնականում պետությանը պատկանող հանքավայրերը, որոնք կառավարվում էին պետության նշանակած հատուկ պաշտոնյաների՝ էմինների կողմից, շահագործման էին տրվում կապալառուներին (մյուլթեզիմ): Ամեն տարի նրանք պարտավոր էին պետությանը տալ որոշված քանակի հանքանյութ, իսկ հավելյալ արդյունահանված հանքանյութը պատկանում էր իրենց:

Մեծ աշխուժություն էր նկատվում հատկապես արհեստագործության այն ճյուղերի բարգավաճման մեջ, որոնք աշխատում էին տեղական հումքի բազայի վրա: Արհեստագործության ամենազարգացած ճյուղը մետաղաձևարվեստն էր: Այն բարձր մակարդակի վրա էր գտնվում Էրզրումում, Թոքատում, Երզնկայում, Սեբաստիայում, Վանում: Մետաղաձևարվեստի տարատեսակներից պղնձագործությանը հռչակված էր հատկապես Թոքատը, ինչպես նաև Էրզրումը, Ամասիան, Մարզվանը, Երզնկան, Սեբաստիան: Մետաղագործության ճյուղերից զարգացած էին նաև դարբնությունը, զինագործությունը, պայտարությունը, փականագործությունը, ոսկերչությունն ու արծաթագործությունը:

Արհեստներից զարգացած էին նաև ջուլիակությունը, մետաքսագործությունը (հատկապես Բուրսայում), կտավագործությունը: Գործվածքեղենի արտադրության կենտրոններ էին Սեբաստիան, Թոքատը, Բիթլիսը, Պիարբեքիրը: Զարգացած էր նաև ներկարարությունը, մեծ համարում ունեին հատկապես բուսական ծաղկամբ ներկերը և դրանցով զուսնազարդված գործվածքները: Տարածված արհեստներից էին գորգագործությունը, կտավագործությունը, կավագործությունը: Զնայած պղնձագործության տարածվածությանը՝ կավագործությունը և ուներ իր պատվավոր տեղը:

XVIII դարի վերջին Արևմտյան Հայաստանում զարգացած արհեստներից հիշվում են կաշեգործությունը, հյուսնությունը, թաղիքագործությունը, քարակոփությունը, որմնադրությունը, ժամագործությունը, դերձակությունը, հացագործությունը, կոշկակարությունը և այլն<sup>35</sup>: XVI - XVII դդ. ժամանակաշրջանում արհեստագործության ամենախոշոր կենտրոնը մնում էր մայրաքաղաք Կ.Պոլիսը, ուր արհեստավորների զգալի մասը հայեր և հույներ էին<sup>36</sup>: XVIII դարում ևս Կ.Պոլսում հայտնի արհեստավորների մեջ մեծ թիվ էին կազմում հայերը:

XVI - XVIII դդ. Արևմտյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքում զնայով ավելի ու ավելի մեծ դեր սկսեց խաղալ նոր ծնունդ առնող վաճառականական բուրժուազիան՝ հանձինս խոջաների, չելեքիների, իսկ XVIII դարից՝ անիրաների: Հայ վաճառականությունը հիշյալ դարերում

<sup>35</sup>Տես Դիան Հայոց պատմութեան, Գրք Ժ., էջ 337-338: Ըստ Վ. Աբրահամյանի՝ արհեստավորական այդ մասնագիտությունների ցանկի շարադրությունից կարելի է եզրակացնել, որ դա վերաբերում է 18-րդ դարի երկրորդ կեսին: Տես Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում, էջ 252 (ծան.):

<sup>36</sup>Տես Զուլպյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 313:

ամրապնդվում էր ոչ միայն Հայաստանի սահմաններից դուրս, որտեղ ուներ իր զարգացման համար նպաստավոր հող, այլև բուն Հայաստանում<sup>37</sup>:

Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում XVIII դարի երկրորդ կեսին զգալի էր հայ վաճառականության, արհեստավորների, առևտրականների ու վաշխառու-սեղանավորների (սարաֆ) խաղացած դերը: Նշված ժամանակաշրջանում Օսմանյան հսկայածավալ կայսրության ներքին առևտրի զգալի մասը, մասամբ նաև արտաքին առևտուրը, ինչպես նաև մայրաքաղաք Կ.Պոլիս կատարվող մեծաքանակ առաքումներն իրականացնում էին հայ վաճառականները, ովքեր, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, երբեմն նույնիսկ իրենց կյանքը վտանգի ենթարկելով, քարավաններ կազմած շրջում էին Արևելքի երկրներով, իրականացնում առևտրական գործարքներ ու ապրանքափոխանակություն՝ զարկ տալով առևտրական հարաբերությունների զարգացմանը:

Հայ վաճառականների ու ամիրաների ձեռքում հսկայական հարստություն էր կուտակվել, որի մի մասն օգտագործվում էր նաև բարեգործական ու ազգասիրական նպատակներով:

*ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ* հանրագումարի են բերված

առենախտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը, ըստ էության, շարունակում էր գոյություն ունենալ միայն ձևականորեն: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին պետության մեջ տեղի էին ունենում նահանգային փաշաների անջատողական, կենտրոնախույս ձեռնարկումներ, անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ելուզակությունը հասել էին աննախընթաց չափերի: Բ.Ռուռն անկարող էր ճնշել այդ ապստամբությունները և զոհանում էր նրանով, երբ հասնում էր այն բանին, որ ապստամբները ճանաչում էին սուլթանի գերիշխանությունը և հարկ էին վճարում:

2. XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվախք էր ապրում ներաբնական հակասություններից. ռազմասավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության վարած սոցիալ-տնտեսական ու հարկային քաղաքականությունն իր ողջ ծանրությամբ և դրանից բխող հետևանքներով ընկած էր հատկապես աշխատավոր քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի ուսերին:

3. XVIII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի հիմնական մասն ընդգրկված էր Էրզրումի, Վանի, Կարսի, Բայազետի, Չըլդըրի, Դիարբեքի, Սվազի (Սեբաստիա) եյալթեքների կազմում: XVIII դարի երկրորդ կեսին վերաբերող դՕստնի, Համնեի և Ինճիճյանի ցուցակներում եղած տարբերությունները, ըստ երևույթին, գոյություն ունեն այն պատճառով, որ Օսմանյան կառավարությունը հաճախակի է փոփոխել եյալթեքների կազմը: Միաժամանակ այս երեք ցուցակների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանցից և ոչ մեկը լիարժեքորեն չի արտացոլում Օսմանյան կայսրության, մասնավորապես նաև Արևմտյան Հայաստանի, ճշգրիտ վարչական բաժանումը: Սակայն, բանի որ վերոհիշյալ հեղինակները վարչական բաժանման վերաբերյալ տվյալները քաղել են արքունական դիվաններից,

<sup>37</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 235:

կարելի է եզրակացնել, որ Օսմանյան կայսրությունում կատարված վարչական փոփոխությունները ժամանակին չեն հաստատագրվել ու վավերացվել արքունական դիվանի համապատասխան փաստաթղթերում:

4. Իրենց պատմական հայրենիքի որոշ նպաստավոր շրջաններում հայերը պահպանել էին մի քանի իշխանապետություններ: XVIII դարի երկրորդ կեսին այդ իշխանապետություններից Սաաունը, Իսյանն ու Սավուրը, Մոկսը, Շատախը և Խոտորջուրը կիսանկախ էին: Վերջինս տարեկան որոշ զուևար (200 - 300 դուրուշ) էր տալիս լազ դերեբեյին: Հայկական իշխանապետություններից Մոկսի և Շատախի իսկական տերերն էին հայ մելիքները, որոնց ձեռքում էր կենտրոնացած ռազմական և վարչական իշխանությունը, դատավարությունը:

5. XVIII դարի երկրորդ կեսին հսկայածավալ Օսմանյան կայսրությունը հպատակ երկրների ժողովուրդների նկատմամբ վարում էր բացարձակ բռնությունների և անօրինակ կեղերումների քաղաքականություն, ռազմաավատական շահագործում, սոցիալ-տնտեսական բռնաճնշումներ, ազգային ու կրոնական հալածանքներ և հարստահարություններ: Հատկապես ծանր էր ոչ մահմեդական հպատակների վիճակը, ովքեր հավելյալ շահագործման էին ենթարկվում պետության հարկահավաք պաշտոնյաների կողմից. քրիստոնյաների համար գոյություն ունեին բազմաթիվ հարկեր ու տուրքեր, որոնց զանձումն իրականացվում էր քնահաճ, վայրագ ու բիրտ ձևերով: Գյուղատնտեսության ու արհեստագործության զարգացման ցածր մակարդակն ու անչափ բարձր ու անկանոն զանձվող հարկերը ծանր վիճակ էին ստեղծել աշխատավոր զանգվածների համար:

6. XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան պետությունը հետևողականորեն շարունակում էր վարել տաճկացման (մահմեդականացման, ապա և թուրքացման) քաղաքականություն: Թուրքական իշխանություններն Արևմտյան Հայաստանում շարունակում էին կիրառել հայ բնակչության բռնի մահմեդականացման, ինչպես նաև կայսրության տարբեր շրջաններից թուրք, թյուրքալեզու, բուրդ բնակիչների վերաբնակեցման և երկրամասի ազգագրական պատկերի դիմափոխման քաղաքականություն: Սուլթանական կառավարության գործադրած ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունից, թալանից ու կողոպուտից խուսափելու համար հայ ժողովուրդը դիմում էր արտագաղթի: Դարեր շարունակ Արևմտյան Հայաստանից տեղի ունեցող արտագաղթերը շարունակվում էին նաև XVIII դարի երկրորդ կեսին: Սակայն չնայած տարեկան աղետների պատճառած վնասներին, բռնությունների ու հարկադրանքների ահազնացող փաստերին, բռնությամբ զանգվածաբար մահմեդականացումներին, արտագաղթին, այնուամենայնիվ, նույնիսկ այդ պայմաններում, XVIII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի գավառների մեծ մասը, ի տարբերություն խոշոր քաղաքների, դեռևս շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ:

7. XVIII դարի երկրորդ կեսին ոչ մահմեդական ժողովուրդները կայսրության մեջ զրկված էին մարդկային անենաստարական իրավունքներից, և ուսնահարվում էին նրանց ազգային ու կրոնական զգացումներն ու մարդկային արժանապատվությունը: Դա այնքան ակնառու և տարածված բնույթ է կրել, որ նմանօրինակ վկայություններ են թողել նույնիսկ բավական կարճ ժամանակամիջոց Օսմանյան կայսրությունում ապրած եվրոպացի

հեղինակները: Խտրական վերաբերմունքը քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի նկատմամբ պահպանվեց մահ հետագայում: Այդպիսի ծանր պայմաններում բնական է, որ, ինչպես հայերը, այնպես էլ թուրքահպատակ մյուս քրիստոնյա ժողովուրդները պետք է ամեն զնով ձգտեին թոթափելու ասելի սուլթանական լուծը և կանա թե ականա դառնային Օսմանյան կայսրության թշնամիների բնական դաշնակիցներ, և հետագայում բռնկված ազգային-ազատագրական շարժումներն այդ ծանր դրությունից ելք որոնելու ուղիներից էին:

8. XVIII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանն իրենից ներկայացնում էր հետամնաց գյուղատնտեսական երկրամաս, որի բնակչության գոյությունը պայմանավորված էր հիմնականում գյուղատնտեսության եկամուտներով: Արևմտահայության՝ տոկոսային հարաբերությամբ փոքրամասնությունն ապրում էր քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում: Առևտրաարհեստագործական կենտրոններում բնակվող արևմտահայության հիմնական զբաղմունքը առևտուրն ու արհեստագործությունն էր: Քաղաքային ազգաբնակչության թիվը XVIII դարի վերջին քառորդին աճման բավականին ցածր ցուցանիշ ուներ: Արևմտյան Հայաստանի քաղաքների մեծ մասում հայերը կազմում էին բնակչության փոքրամասնությունը:

9. XVIII դարի երկրորդ կեսին արևմտահայ բնակչության հոծ զանգված էր կենտրոնացած Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում: Նշված ժամանակաշրջանում Կ.Պոլիսը արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր կենտրոնն էր: Կ.Պոլսի բնակչությունն ավելի քան 500000 էր և հայերի թիվը մոտավորապես եղել է 70000-80000, առավելագույնը՝ 100000: Հավանական ենք համարում, որ XVIII դարավերջին Կ.Պոլսում հայ ազգաբնակչության թիվը եղած լինի քիչ ավելի, քան տվյալների հիման վրա հաշվարկած 70000-80000-ը, բայց ոչ ավելի, քան 100000-ը: Կ.Պոլսի հայ բնակչության թիվը, բնական աճին ու վերարտադրողականությանը զուգահեռ, աճում էր հիմնականում ի հետևանք արևմտահայ գաղթականության անընդհատ հոսքի, ովքեր աշխատանք էին փնտրում կամ զավառներում տիրող անբարենպաստ իրավիճակից, հարկային կեղեքումներից, ազգային ու կրոնական հպաժանքներից ու բռնաճնշումներից ազատվելու և փրկության միջոց էին համարում Կ.Պոլիս գաղթելը: Վերաբնակիչների փոքր մասը որոշ զումար վաստակելուց հետո վերադառնում էր իր նախկին բնակավայրը, իսկ մեծ մասը կամ հիմնավորվում էր Կ.Պոլսում, կամ էլ շարունակում տարագրությունը դեպի եվրոպական երկրներ: XVIII դարի վերջին քառորդին Երզրումի բնակչությունը եղել է մոտ 70000-80000 մարդ: Ըստ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի վկայության՝ Երզրումի բնակչության մեկ երրորդը կազմել են հայերը, ուրեմն հայոց թիվը XVIII դարի վերջին քառորդին Երզրումում եղել է մոտ 23000-26000: XVIII դարի վերջին քառորդին Երզրումի մահմեդական բնակչության մեջ նշանակալի թիվ էին կազմում զինվորականները: XVIII դարավերջին և XIX դարասկզբին Կարսի բնակչությունը կազմել է մոտ 2300 տուն կամ մոտ 12000 մարդ, որից 3000-ը՝ (600 տուն) հայեր: XIX դարի սկզբին Բայազետն ուներ մոտ 25000-30000 բնակիչ և բնակչության մեծամասնությունը հայեր էին: Թեև քրիստոնյաներին արգելվում էր զենք կրել, սակայն Բայազետի փաշայության հայերը զենք

կրելու բացառիկ իրավունք ունեին, և Բայազետի փաշան միակն էր, որ հայերին ընդունում էր զինվորական ծառայության: XVIII դարի վերջին Բիթլիսը բավականին մեծ և լավ բնակեցված քաղաք էր: Այն ուներ շուրջ 30000 բնակիչ, որոնցից 7000-8000-ը հայեր էին: XVIII դարի վերջին քառորդին Թոքատի բնակչությունը մոտ 60000 հոգի էր, իսկ հայերը քաղաքում ունեին մոտ 2000-2500 տուն կամ 10000-13000 հոգի բնակիչ: XVIII դարի վերջին քառորդին հայերը բավականին մեծ թիվ էին կազմում Պիարբեքիում: Քաղաքի անբողջ բնակչության (շուրջ 80000-90000 հոգի) մոտ 1/3-ը կամ մոտ 25000-30000 բնակիչները հայեր էին: Իրենց ուղեգրություններում եվրոպացի հեղինակները շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև վերոհիշյալ քաղաքների առևտրաարհեստագործական կյանքի, բնակիչների զբաղմունքի, ներմուծվող և արտահանվող ապրանքների մասին, որոնք լրացնում և ամբողջացնում են այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունները:

10. Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքում XVIII դարի երկրորդ կեսին զգալի էր հայ վաճառականության, արհեստավորների, առևտրականների ու վաճառու-սեղանավորների (սարաֆ) խաղացած դերը: Նշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության ներքին առևտրի զգալի մասը (մոտ 60-70%), մասամբ նաև արտաքին առևտուրը, ինչպես նաև մայրաքաղաք Կ.Պոլիս կատարվող մեծաքանակ առաքումներն իրականացնում էին հայ վաճառականները, ովքեր, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, երբեմն նույնիսկ իրենց կյանքը վտանգի ենթարկելով, քարավաններ կազմած շրջում էին Արևելքի երկրներով, իրականացնում առևտրական գործարքներ ու ապրանքափոխանակություն՝ զարկ տալով ներքին ու արտաքին առևտրին:

### *Անտնախտության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.*

1. Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը XVIII դարի երկրորդ կեսին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտական տեղեկագիր (Հունանիտար գիտություններ), N 1 (13), Մանկավարժ հրատ., Երևան, 2011, էջ 24-34:

2. Հայերի սոցիալ-իրավական դրությունը Օսմանյան կայսրության մեջ XVIII դարի վերջին քառորդին, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 71-81:

3. Քաղաքական իրավիճակն Արևմտյան Հայաստանում XVIII դարի վերջին քառորդին, Մխիթար Գոշ, Գիտամեթոդական հանդես, Հասարակական գիտություններ, N 4, Վանաձոր, 2007, էջ 20-25:

4. Հայերի դերը Օսմանյան կայսրության առևտրական կյանքում 18-րդ դարի վերջին քառորդին, Մխիթար Գոշ, Գիտամեթոդական հանդես, Հասարակական գիտություններ, N 2, Վանաձոր, 2008, էջ 68-71:

5. Գ.-Ա. Օլիվիեի տեղեկությունները Ուրֆայի մասին (XVIII դ. վերջին քառորդ), Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, N 8, Երևան, 2007, էջ 122-130:

6. Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆի տեղեկությունները Տրասպիզոնի մասին (XVIII դ. վերջին քառորդ), Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, N 7, Երևան, 2006, էջ 37-46:

7. Գ.-Ա. Օլիվիեի ճանապարհորդությունը դեպի Արևելք, Սանկալարժական միտք, Պատմություն և կրթություն (Գիտատեսական և մեթոդական հանդես), N 3-4, Չանգակ-97, Երևան, 2006, էջ 57-61:

Малоян Арман Манукович

## СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVII ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении".

Защита состоится 20-го мая 2011 г. в 14<sup>00</sup> ч. по адресу: г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте истории Национальной Академии Наук РА.

### РЕЗЮМЕ

В диссертации рассматриваются узловые проблемы и положения в истории Западной Армении, в частности, социально-экономическое положение в регионе во второй половине XVIII века; политическая жизнь; вопросы внешней и внутренней торговли; ремесла; налоговая система; различные формы землевладения; социально-правовое положение населения; режим правления; административные деления и т.д.

Анализ исторических событий в Западной Армении с научной точки зрения имеет также и актуальное значение: особенно с позиции возникших проблем в современных армяно-турецких отношениях и дальнейшей разработки верной стратегической политики. Тем более, что в последние десятилетия турецкие историки и официальные круги фальсифицируют важные вопросы армянской истории, односторонне и искаженно комментируя их.

Диссертация состоит из трех глав. В первой главе ("Политическое положение в Западной Армении во второй половине XVIII века") представлены внутривнутриполитическое, временами напряженное, состояние, царящее в Османской империи и в находящейся в ее составе Западной Армении; деятельность центробежных феодалов и ее отрицательные последствия на общее внутривнутриполитическое положение; административно-территориальное деление Западной Армении и режим.

Во второй половине XVIII века Османская империя находилась на низкой ступени развития, являя собой средневековую отсталую империю, которая переживала агонию от внутрисоциальных противоречий.

Административное деление Западной Армении представлено согласно документальным данным в работах М. д'Оссона, И. Хаммера и Г. Инчичяна. В этих работах отмечен ряд разногласий, что можно объяснить следующим образом: Османское правительство для облегчения сбора налогов, по причине миграции, в угоду отдельным правителям эйлаетов, а также для усиления своего влияния на них часто меняло границы административного деления. А эти изменения, в свою очередь, иногда вовремя не фиксировались и не ратифицировались в соответствующих придворных канцелярских документах.

В то же время нужно отметить, что, пользуясь ослаблением центральной власти, некоторые местные правители создали полунезависимые образования.

В некоторых благоприятных регионах своей исторической Родины армяне сохранили несколько самовластных областей. Во второй половине XVIII века являлись полунезависимыми некоторые из этих областей – Сасун, Исян и Савур,



Мокс, Шатах и Хоторджур. А последнее платило некоторую сумму (200-300 гуруш) лаз деребею. Настоящими хозяевами армянских самовластных областей Мокс и Шатах являлись армянские мелики, в руках которых были сосредоточены военная и административная власть, судопроизводство.

Во второй главе (“Аграрные отношения в Западной Армении во второй половине XVIII века”) рассмотрены вопросы земельных отношений, существующие в Османской империи; различные формы землевладения; налоговая политика, которую вела империя; налоги; социально-экономическое и правовое положение западных армян; дискриминационная национальная и религиозная политика, которую вела империя по отношению к ним; тирания и гонения.

При сопоставлении и анализе данных армянских и иноязычных источников можно аргументировать, что в данный промежуток времени подданные Османской империи немусульманские народы были лишены самых элементарных человеческих прав, попирались их национальные и религиозные чувства и человеческое достоинство.

В третьей главе (“Города, ремесла и торговля”) представлены различные крупные города Западной Армении и столица империи – Константинополь; их торговая жизнь и ремесла; причины отсталости городов; тенденции развития; этническая характеристика; с приблизительной точностью рассчитана общая численность населения этих городов и конкретно армян; роль, которую сыграли армяне в экономической жизни Османской империи и Западной Армении в целом. Для этих данных были использованы исторические источники и специальная литература.

Во второй половине XVIII века западные армяне, составляющие в процентном соотношении меньшинство, жили в городах и поселках городского типа. Основным занятием западных армян в торгово-ремесленных центрах были торговля и ремесла.

В экономической жизни Османской империи во второй половине XVIII века существенно была роль армянских торговцев, ремесленников, ростовщиков (сарафов). В указанный период ощутимая доля внутренней, а частично и внешней торговли огромной Османской империи, а также оптовые продажи, производимые в столице – Константинополе, осуществляли армянские торговцы. Они, преодолевая многочисленные препятствия, иногда с угрозой для жизни странствовали по восточным странам с караванами, осуществляли торговые сделки и товарообмен, тем самым способствуя развитию торговых отношений.

В заключении диссертации обобщены и изложены выводы по основным рассмотренным в работе вопросам.

ARMAN MALOYAN

## THE SOCIO-ECONOMIC CONDITIONS OF WESTERN ARMENIA OF THE SECOND HALF OF THE XVIII CENTURY

A PhD thesis in History of Armenia (specialty 07.00.01).

The defense of the thesis will take place on May 20, 2011, in Yerevan, 24/4 Marshal Baghramian Ave., at the session of the Specialized Council 004 by the Institute of History of the Academy of Sciences of RA.

### SUMMARY

The thesis addresses a number of topical and crucial issues related to the history of Western Armenia, in particular, its socio-economic conditions in the second half of the XVIII century, the town life, the internal and external trade, crafts, taxation, the forms of landowning, the social and legal status of the population, the system of administration and the administrative division, etcetera.

An academic research of the history of Western Armenia has topical significance, especially from the aspect of issues in relation to the Armenian-Turkish current relations and the elaboration of further strategies, considering that the Turkish historiography of the recent decades and the official circles tend to misrepresent and misinterpret some of the crucial issues in this respect.

The thesis comprises three chapters. Chapter One titled "The Political Situation in Western Armenia, in the Second Half of the XVIII Century" depicts the unstable, often tense inner political situation in the Ottoman Empire in general and in Western Armenia as its part, in particular; the activities of the decentralized feudal barons, and their negative influence on the inner political situation of the Empire; the system of administration and the administrative division of Western Armenia.

In the second half of the XVIII century the Ottoman Empire was a backward medieval state, in agony due to internal conflicts.

The administrative division of Western Armenia is given according to the lists brought in the works of M. d'Ohsson, J. Hammer and GH. Inchichyan. The differences between these lists, as shown, are most probably due to the fact that the Ottoman government often used to make alterations to this division, for various reasons – either due to demographic migration, or to make easier tax collection, or else to just indulge the governors of certain eyalets, and to keep them under control. These changes were not always properly registered and documented.

It should be noted, too, that some of the local governors took advantage of the weakening of the central rule, and created semi-independent principalities.

Armenians had maintained sovereignty in some of the more favourable regions of their historical homeland. Among these in the second half of the XVIII century were Sassoon, Isyan and Saviour, Moks, Shatakh and Khotorjur that were semi-independent. The latter used to pay a yearly tax of 200-300 kurushes to the

Laz derebey. The actual lords of Moks and Shatakh were Armenian meliks, who held military, administrative and judicial power.

Chapter Two titled "The Agrarian Relations in Western Armenia, in the Second Half of the XVIII Century" explicates the forms of landowning, taxation, the social-economic and legal status of Western Armenians, the policy of the Empire, of ethnic and religious discrimination against Armenians, and their persecution.

Through comparison and analysis of Armenian and foreign sources it becomes evident that in the given period all non-Muslim subjects of the Ottoman Empire were deprived of elementary human rights, their dignity and religious feelings being trampled.

Chapter Three titled "The Towns, Crafts and Trade" describes the crafts, the trade and the life in general in larger towns of Western Armenia and in the capital – Constantinople; the reasons for the backwardness and tendencies towards development, as well as the ethnic picture of these towns; it gives an estimation of the general population of these towns and the approximate number of Armenians; it considers the role of Armenians in the commercial life of the Ottoman Empire and of Western Armenia.

In the second half of the XVIII century the comparative minority of the Western Armenian population lived in towns and urban areas. The population of these commercial centers was mainly engaged in crafts and trade.

In the economic life of the Ottoman Empire of the second half of the XVIII century the role of the Armenian traders, artisans and moneylenders (sarafs) was considerable. In the said period the major part of the inner trade in the vast Ottoman Empire, part of its external trade, as well as the large volume of deliveries to the capital, Constantinople, was carried out by Armenian traders, who often had to overcome serious obstacles, and even risk their lives to travel in the countries of the Orient to obtain all kinds of goods, and to conclude commercial deals, and thus to stimulate the development of trade.

The conclusion generalizes the main issues considered in the thesis and makes deductions.